Հ. Հ. ԴՐԱԲՍԿԻ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՆԴՐՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ (1922—1936 ԹԹ.)

Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման հետևանքով ստեղծված Անդրֆեդերացիան ունեցավ կարևոր պատմական նշանակություն՝ երկրամասի ժողովուրդների տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի բոլոր ասպարեզներում։ Անդրֆեդերացիան ամրապնդեց երկրամասի հանրապետությունների տնտեսական և քաղաքական դաշինքը, ուժեղացրեց սովետական իշխանության դիրքերը Մերձավոր արևելքի սահմանագծում, բարձրացրեց նրանց ռազմական հզորությունը, կայուն հիմքերի վրա դրեց անդրկովկասյան ժողովուրդների եղբայրական համերաշխությունը։ Անդրֆեդերացիայի ժողովուրդների տնտեսական, քաղաքական և կուլտուրական համագործակցության մասին հրապարակված են բավական աշխատություններ[1] որոնց մեջ լուսաբանվել է անդրկովկասյան ժողովուրդների տնտեսությանը, քաղաքականությանը և կուլտուրային վերաբերող մի շարք հարցեր։ Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել, որ անդրկովկասյան հանրապետությունների տնտեսական և քաղաքական զարգացման գործում ոչ պակաս դեր են կատարել Անդրֆեդերացիայի արտաքին առևտրական հարաբերությունները, որոնք մինչև հիմա գրեթե չեն լուսաբանված։ Ուստի, ներկա հոդվածի խնդիրն է համառոտակի տալ արտաքին-առևտրական կապերի զարգացման վերլուծությունը և նրա դերը երկրամասի էկոնոմիկայի վերելքի գործում։

Անդրֆեդերացիա ստեղծվելուց հետո կազմվեց նրա ֆեդերատիվ կառավարությունը, որի մեջ մտան ժողովրդական տնտեսության ճյուղային ժողկոմիսարիատները, այդ թվում նաև Անդրֆեդերացիայի արտաքին առևտրի ժողկոմիսարիատը, որի առաջին ժողկոմ նշանակվեց Ա. Ի. Իվանյանը։ Անդրֆեդերացիայի արտաքին առևտրի ժողկոմիսարիատը[2] արտասահմանյան երկրների հետ կատարած առևտրական գործարքները իրականացնում էր առևտրա-տնտեսական և կազմակերպչական օրգանների միջոցով, որոնց մեջ մտնում էին՝ արտահանման և ներմուծման առևտրի, օպերատիվ, հաշվարկատոկոսային, ֆինանսական և իրավաբանական բաժինները, ինչպես նաև արտասահմանում գործող առևտրական ներկայացուցչությունները, որոնց միջոցով իրացվում էին արտահանված միջոցները և ձեռք էին բերվում երկրամասի կենսական պահանջների համար անհրաժեշտ ապրանքներ։

1922 թ. Անդրֆեդերացիայի և ՌՍՖՍՀ-ի արտաքին առևտրի ժողկոմիսարիատների միջև ստորագրվեց համաձայնագիր[3], ըստ որի, երկրամասի առևտրական ներկայացուցիչները մտնում էին Ռուսաստանի ֆեդերացիայի ներկայացուցչությունների կազմի մեջ, իսկ ՍՍՀՄ կազմվելուց հետո՝ վերջինիս ներկայացուցչություններում։ Անդրֆեդերացիայի առևտրական ներկա-

---

1 Սահակյան, Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և ազգային հարցի լուծումը Անդրկովկասում, Տ. Ա. Բալոյան, Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության և կոմունիստական ինարարության պատմության կեղծարարության դեմ, Ա. Խ. Շահինյան, Ուրվագծեր Անդրկովկասյան ժողովուրդների կուլտուրական համագործակցության պատմության, Բ. Հ. Լալաբեկյան, Վ. Ի. Լենինը և սովետական կարգերի հաստատումն ու ամրապնդումը Անդրկովկասում, Գ. Վարդգեսյան, Անդրկովկասյան հանրապետությունների տնտեսական և քաղաքական համագործակցությունը 1921—1923 թթ.։

2 1922—1927 թթ. Անդրկովկասում գոյություն ուներ արտաքին առևտրի ժողկոմիսարիատ, իսկ 1927 թ. վերածվում է ՍՍՀՄ-ի արտաքին առևտրի անդրկովկասյան լիազորության երկրամասի մնացած ժողկոմներին հավասար իրավունքներով։

3 Տե՛ս Վրաստանի պետական արխիվ, ֆ. 617, գ. 19, թ. 342։

յացուցչությունները տեղաբաշխված էին Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Իտալիայում, Ավստրիայում, Շվեդիայում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Բելգիայում, Հոլանդիայում, Թուրքիայում, Իրանում, Եգիպտոսում։ Իսկ Հարավային Ֆրանսիայում (Մարսել), Հյուսիսային Իրանում (Թավրիզ), Արևելյան Թուրքիայում (Էնզելի) Անդրկովկասը ուներ ինքնուրույն ներկայացուցչություններ[4] և այդ շուկաներում առևտրական գործարքները կատարում էր առանց ՍՍՀՄ ներկայացուցչությունների միջամտության։ Նրանք ուսումնասիրում էին տվյալ երկրի շուկան և ժողովրդական տնտեսության վիճակը, ինֆորմացիա էին տալիս տվյալ երկրի տնտեսական ու քաղաքական ղեկավար շրջաններին՝ իր երկրի տնտեսական դրության մասին (այստեղ նկատի ունենք էքսպորտային միջոցների և իմպորտային կարիքների մասին), սիստեմատիկ հետևում էին առևտրական պայմանագրերի իրականացմանը և մշակում նոր պայմանագրեր։ Անդրֆեդերացիայի արտաքին առևտրի ներկայացուցիչները իրենց գործունեության մեջ հենվում էին ՍՍՀՄ առևտրական պայմանագրերի իրավական հիմքի վրա, քանի որ երկրամասի արտաքին առևտուրը հանդիսանում էր ՍՍՀՄ-ի արտաքին առևտրական հարաբերությունների բաղկացուցիչ մասը։ Այս հանգամանքը բոլորովին էլ չէր սահմանափակում երկրամասի արտաքին առևտրական հարաբերությունների ինքնուրույնությունը։ Այսպես, օրինակ, ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանում Անդրֆեդերացիայի արտաքին առևտրի ժողկոմիսարիատը պայմանագրեր կնքեց 18 խոշոր եվրոպական և ամերիկյան ակցիոներական ընկերությունների[5] հետ, որոնք Թբիլիսիում, Երևանում, Բաքվում, Բաթումում և Սուխումում ունեին բաղային պահեստներ, որտեղ կենտրոնացվում էին նրանց ներմուծված ապրանքները։ Անդրֆեդերացիայի արտաքին առևտրի կազմակերպման և իրականացման գործում կարևոր նշանակություն ունեցավ նաև նրա վարած մաքսային քաղաքականությունը, որը մի կողմից հնարավորություն տվեց մաքսատուրքերի միջոցով հովանավորելու երկրամասի արդյունաբերությունը օտարերկրյա ապրանքների մրցակցությունից, իսկ մյուս կողմից, մաքսատուրքերի միջոցով ստացվում էր զգալի տուրքեր, որոնք մտնում էին արտասահմանյան վալյուտային եկամուտների մեջ։ Անդրֆեդերացիայի աշխարհագրական դիրքը անհրաժեշտություն դարձրեց նրա ծովային և ցամաքային սահմաններում ստեղծելու խոշոր մաքսատներ՝ Բաթումում, Փոթիում, Սուխումում, Լենինականում, Մարդարայում, Ջուլֆայում, Աստարայում և Բաքվում։ Բացի սրանից, խոշոր մաքսատներ էին հաշվվում նաև Թբիլիսին և Երևանը։ Անդրֆեդերացիայի ստեղծման հենց սկզբից նրա դաշնակցային խորհուրդը հատուկ որոշում ընդունեց երկրամասի մաքսային հիմնարկությունների մասին, որի մեջ ասված էր. «1) Նկատի ունենալով, որ ստեղծվել է Անդրկովկասյան ֆեդերացիան, ուստի անհրաժեշտ է վերացնել նրա կազմի մեջ մտնող հանրապետությունների սահմանների վրա գտնվող մաքսատները։ 2) Ուժեղացնել և ընդարձակել մաքսատները երկրամասի հարավային և արևմտյան սահմաններում, որովհետև տվյալ շրջաններով են անցնում կապիտալիստական երկրների տրանզիտային և մաքսանենգ ապրանքները»[6]։

Ֆեդերացիայի շրջանում մաքսատների դերը չէր սահմանափակվում սոսկ մաքսատուրքերի գանձումով, նրանք զգալի աշխատանք էին կատարում երկրամասում մաքսանենգ ապրանքների ներթափանցման դեմ։ Սովետական իշխանության գոյության առաջին տասնամյակում կապիտալիստական երկրները ամեն կերպ խանգարում էին Անդրֆեդերացիայի հետ կատարվող արտաքին առևտրական հարաբերությունների իրավական նորմաները և թափանցում երկրամասի տերիտորիա՝ մաքսանենգ ապրանքների ներմուծումով։ Մաքսանենգության դեմ պայքարն ուժեղացնելու կապակցությամբ, 1925 թ. դեկտեմբերի 9-ին[7], երկրամասում կազմակերպվեց հատուկ հանձնաժողով՝ արտաքին առևտրի ժողկոմ Իվանյանի գլխավորությամբ, որի նպատակն էր ուսումնասիրել երկրամասի բոլոր մաքսատների աշխատանքը, մաքսանենգ ապրանքների բռնագրավման և նրանց թափանցումը կանխելու միջոցները։ Այդ կապակցությամբ հանձնաժողովը անհրաժեշտ համարեց մաքսանենգության դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով Անդրկովկասի արևմտյան և հարավային սահմանների ճեղքվածքներում ստեղծել նոր մաքսատներ և մաքսակետեր, որը հնարավորություն կտեղծեր կանխել այդ ապրանքների թափանցումը երկրամասի տերիտորիան։ 1926 թ. մայիսի 12-ին[8] արտաքին առևտրի ժողկոմ Իվանյանը զեկու-

4 Նույն տեղում, ֆ. 735, գ. 837, թ. 35։

5 Տե՛ս Վրաստանի պետական արխիվ, ֆ. 735, գ. 192, թ. 155։

6 Տե՛ս նույն տեղում, գ. 89, թ. 43։

7 Տե՛ս Վրաստանի պետական արխիվ, ֆ. 735, գ. 1400, թ. 31։

8 Նույն տեղում, գ. 1400, թ. 164։

սագիր ներկայացրեց Անդրերկրկոմին ու ժողկոմսովետին, որի մեջ նշվում էր, որ մաքսանենգության գեմ պայքարելու գործում գլխավոր ուշադրությունը պետք է դարձնել ներմուծվող մաքսանենգ ապրանքների վրա, քանի որ այդ ապրանքները թափանցելով մեր ներքին շուկան, կմրցեն սովետական ապրանքների հետ և կիրացվեն ավելի բարձր գներով, մյուս կողմից՝ պայմաններ կստեղծեր սերտ կապ պահպանելու երկրամասում դեռ գոյություն ունեցող մասնավոր կապիտալի և արտասահմանյան բուրժուազիայի միջև։ Անդրֆեդերացիայի գոյության առաջին էտապում նրա մաքսատները դանձեցին 29,2 միլիոն ռուբլի մաքսատուրք[9], նույն շրջանում մաքսատների կողմից կատարվեց մաքսանենգ ապրանքների բռնագրավման 26 հազար[10] դեպք, բռնագրավեցին 5,5 միլիոն ռուբլու արժողությամբ մաքսանենգ ապրանքներ։ Երկրամասի կուսակցական, սովետական կազմակերպությունների կողմից արտաքին առևտրի մոնոպոլիայի սկզբունքների հետևողական կիրառման շնորհիվ, մինչև 1929 թ. գրեթե կանխվեց մաքսանենգ ապրանքների թափանցումը երկրամասի շուկաները, որին օժանդակեց նաև երկրամասում մասնավոր կապիտալի լիկվիդացման հանգամանքը, քանի որ վերջինս մաքսանենգության համար նյութական հող էր ստեղծում։

Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի 1922 թ. օգոստոսի 9-ի[11] որոշման մեջ ասված է. «...մշակել արտաքին առևտրի արտահանման և ներմուծման պլաններ, հասնել այն բանին, որ ներմուծված ապրանքների արժեքը, ըստ հնարավորության, ծածկվի արտահանված ապրանքների արժեքով, իսկ ավելորդ մասը մտցնել վալյուտային ռեզերվներում»։ Ուստի, երկրամասի արտաքին առևտրի առաջ խնդիր էր դրված՝ արտահանման ապրանքների արժեքով ոչ միայն պետք է փակել ամբողջ ներմուծման ծախսերը, այլ նաև նախատեսվում էր զգալի քանակությամբ արտասահմանյան վալյուտային միջոցների տնտեսում, որպես սոցիալիստական կուտակման օժանդակ աղբյուր։

Ֆեդերացիայի առաջին հինգ տարվա արտաքին առևտրական գործարքների պատկերը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ (արտահայտված է իրացված գներով[12], միլիոն ռուբլիներով)[13]։

1922 23[14]	1923 24	1924/25	1925 26	1926/27	Ընդամենը հինգ տարում
Ներմուծում 34,7	29,3	65,7	47,7	47,6	225,0
Արտահանում 29,0	46,9	79,5	97,0	122,9	375,3
Ակ շրջ. 63,7	76,2	145,2	144,7	170,5	600,3
Բալանս 5 7	17,6	13,8	49,3	75,3	150,3

Այս տվյալներից երևում է, որ արտահանումը ավելի քան 40 տոկոսով գերազանցում է ներմուծմանը։ Նշանակում է, արտահանված ապրանքների արժեքով ծածկվել է ամբողջ ներմուծվածի գինը և 150,3 միլիոն ռուբլի կուտակվել է երկրամասի վալյուտային ռեզերվներում, որը հանդիսանում է առևտրական ակտիվ բալանսի սալդոն, այն ոսկյա ֆոնդը, որով մշտական պայմաններ էր ստեղծվում համաշխարհային շուկայի հետ ակտիվ տնտեսական կապեր պահպանելու համար։ Արտաքին առևտրական գործարքների զարդացումը ցայտուն կերպով արտահայտում է քննարկվող շրջանի բոլոր տարիներին՝ հատկապես արտահանման մեջ։ Այսպես, օրինակ, առաջին տարվա համեմատությամբ երկրորդ տարում արտահանման արժեքը աճել է 38,1 տոկոսով, երրորդում՝ 41,1 տոկոսով, չորրորդում՝ 17 տոկոսով, հինգերորդում՝ 30 տոկոսով։

---

9 Внешняя торговля СССР (статистический сборник), изд. 1931, М., стр. 757—758.

10 Տե՛ս նույն տեղում։

11 Տե՛ս Վրաստանի պետական արխիվ, ֆ. 735, գ. 147, թ. 7։

12 1922—1923 թթ. գները հաշված են 1913 թ. գներով, իսկ մնացած տարիներին սովետական չերվոնեցով։

13 Աղյուսակի 1922—1925 թթ. տվյալները տե՛ս Статико-экономический сборник Закавказья, стр. 69, իսկ 1925—1926 թթ. տե՛ս Экономический вестник Закавказья, № 24, стр. 85. 1926—1927 թթ. տե՛ս Վրաստանի պետ. արխիվ, ֆ. 735, գ. 908, թ. 180։

14 1922 թ. տվյալները հաշվում են նույն թվականի հոկտեմբերի 1-ից։

Արտահանման նման տեմպերով զարգացումը արդյունք է տվյալ շրջանի տնտեսական քաղաքականության գլխավոր խնդրի իրականացման՝ երկրամասի ժողովրդական տնտեսության վերականգնման և սոցիալիզմի նյութա-տեխնիկական բազայի հիմքերի ստեղծման։ Մյուս կողմից, արտաքին առևտրի մոնոպոլիայի սկզբունքների կիրառման շնորհիվ, սովետական արտաքին առևտրի կազմակերպությունները հնարավորություն ստացան իրենց ձեռքը կենտրոնացնել երկրամասի արտահանվող հումքի հնարավոր բոլոր միջոցները (քանի որ նրանց հետ մրցում էր Անդրկովկասում գեռևս գոյություն ունեցող մասնավոր կապիտալը) և արտահանել արտաքին շուկաներ, իսկ նրանց իրացումից ստացված վալյուտային միջոցները օգտագործել ժողովրդական տնտեսության զարգացման նպատակներին։ Ուստի, մեր երկրի, այդ թվում Անդրֆեդերացիայի, տեխնիկա-տնտեսական հետամնացությունը ստիպում էր ընդարձակել տնտեսական կապերը կապիտալիստական երկրների հետ։ 1922—1925 թթ. ներմուծված սարքավորումների հաշվին վերականգնվեց երկրամասի ժողովրդական տնտեսությունը, իսկ 1926—1927 տնտեսական տարիներում հիմք դրվեց նավթի, պղնձի և մարգանեցի արդյունաբերական ճյուղերի վերակառուցմանը՝ արտասահմանից ներմուծված նորագույն տեխնիկական սարքավորումների բազայի վրա։ 1922—1927 տնտեսական տարիներում երկրամասից արտահանվել են նավթամթերքներ, մարգանեց, ծխախոտ, փայտանյութեր, մատուտակի արմատ, մորթիներ, բուրդ, մետաքսեղեն, եգիպտացորեն, խոզի մազ, բամբակի քուսպ և անասունի աղիքներ, իսկ Սովետական Ռուսաստանից՝ Անդրկովկասի մաքսատներով դեպի Իրան և Թուրքիա էր արտահանվում շաքար, գործվածքեղեն և այլ ապրանքներ։ Արտահանված ապրանքների մեջ ինչպես տեսակարար կշռով, այնպես էլ արժեքային հարաբերությամբ առաջին տեղը գրավում էին նավթամթերքները, որոնց իրացումից մուտքերը կազմեցին 200 միլիոն ռուբլի[15], կամ տվյալ շրջանի ամբողջ էքսպորտի 53,2 տոկոս։ Միջազգային շուկաներում Անդրկովկասի նավթամթերքների հետ մրցում էր իրանական նավթը, որը գտնվում էր Անգլո-Պերշե և Անգլո-Հոլանդական խմբավորումների ձեռքում։ Մոնոպոլիստական այս խմբերը ձգտում էին եվրոպական շուկայից կոնկուրենցիայի միջոցով դուրս շպրտել անդրկովկասյան և ամերիկյան նավթամթերքները։ Սկսած 1924 թ. դադարեցվեց ամերիկյան նավթամթերքների էքսպորտը դեպի եվրոպական շուկաներ, քանի որ ԱՄՆ-ի էկոնոմիկայում սկսվեց ժամանակավոր «կայունացում», որի պատճառով նրա նավթամթերքները գնում էին ներքին սպառմանը։ 1924—1925 տնտեսական տարում[16] երկրամասի բենզինի պահանջարկը Անգլիայում բարձրացավ 172 տոկոսով, իսկ մյուս նավթամթերքներինը՝ 30, Գերմանիայում՝ 30, Ֆրանսիայում՝ 38, Իտալիայում՝ 500, Բելգիայում՝ 100 տոկոսով։ Քննարկվող ժամանակաշրջանի առաջին երեք տարիներում երկրամասի նավթամթերքների շուկայական գինը մեկ փթի համար կազմում էր 80 կոպեկ[17], իսկ 1926/27 տնտեսական տարիներում գները ընկան և հասան մինչև 60 կոպեկի, որովհետև ավելացավ Մերձավոր արևելքի նավթային ավազանների էքսպորտը, ինչպես նաև ԱՄՆ-ը սկսեց նավթամթերքներ արտահանել Մեքսիկայից ներմուծված նավթի հաշվին, որի պատճառով նավթամթերքների առաջարկը միջազգային շուկաներում գերազանցեց նրանց պահանջարկին։ Չնայած այս հանգամանքը ազդեց երկրամասի նավթամթերքների իրացման պայմանների վրա, բայց չկրճատվեց այդ ապրանքներից ստացվող վալյուտայի քանակը, քանի որ ավելացվեց նրանց էքսպորտի տեսակարար կշիռը։ Անդրկովկասի էքսպորտային մնացած ապրանքներից արտաքին շուկաներում համեմատաբար իրացման կայուն պայմաններ ունեին մարգանեցը, մատուտակի արմատը և փայտանյութերը, իսկ մնացած էքսպորտային միջոցների (որոնք հիմնականում գյուղատնտեսական ապրանքներ էին) իրացման գները քննարկվող շրջանի բոլոր տարիներում անկայուն է կապված եղել պահանջարկի և առաջարկի հարաբերակցության տատանման հետ։ Չնայած այս հանգամանքին, գյուղատնտեսական ապրանքների իրացումից ստացված մուտքերը կազմեցին 135,3 միլիոն ռուբլի[18], կամ տվյալ ժամանակաշրջանի ամբողջ արտահանման 36 տոկոսը, իսկ մարգանեցի, մատուտակի արմատի և փայտանյութերի վալյուտային մուտքերը՝ մոտ 40 միլիոն ռուբլի[19], կամ 10,8 տոկոսը։ Երկրամասի արտահանման ապ-

---

15 Տե՛ս Статико-экономический сборник Закавказья, стр. 80 և Վրաստանի պետական արխիվ, ֆ. 735, գ. 908, թ. 182։

16 Նույն տեղում, թ. 45։

17 Տե՛ս Վրաստանի պետական արխիվ, ֆ. 735, գ. 1448, թ. 46։

18 Նույն տեղում, գ. 908, թ. 182։

19 Տե՛ս նույն տեղում։

բանքները հիմնականում իրացվեցին ԱՄՆ-ում, Անգլիայում, Բելգիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Հոլանդիայում, Իտալիայում, Իրանում, Թուրքիայում և այլ երկրներում[20]։

* *
*

Անդրֆեդերացիայի արտաքին առևտրական հարաբերությունները նոր էտապ թևակոխեցին սոցիալիզմի առաջին հնգամյակի տարիներում, երբ սովետական ամբողջ ժողովուրդը պայքարում էր վիթխարի խնդիրներ լուծելու համար, այն է՝ ստեղծել բարձր զարգացած արդյունաբերություն, որպեսզի ի վիճակի լինի տեխնիկապես վերազինելու ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը, իսկ գյուղացիական տնտեսությունների մեծամասնությունը փոխադրել սոցիալիստական արտադրության ուղու՝ մեքենայական տեխնիկայի հիման վրա, դուրս մղել կապիտալիստական տարրերին ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերից, ապահովել ազգային հանրապետությունների և մարզերի տնտեսական ու կուլտուրական վերելքը, բարձրացնել ժողովրդի նյութական և կուլտուրական մակարդակը և ամրապնդել երկրի պաշտպանունակությունը։ Սոցիալիզմի առաջին հնգամյակի դիրեկտիվներում երկրի արտաքին առևտրի խնդիրների մասին նշված է. «Ելնելով արտաքին առևտրի ընդհանուր կուրսից (առավելագույն առևտրական կապեր սեփական արտադրական բազիսի ամրապնդման և կապիտալիստական աշխարհից հարաճուն անկախության պայմանով), անհրաժեշտ է արտաքին առևտրի պլանը կառուցել անպայման առևտրական ակտիվ բալանս ունենալու դրությամբ։ Առևտրական ակտիվ բալանսը, երկրում ոսկու հանույթն ավելացնելու հետ միասին, վալյուտային ռեզերվի գոյացման հիմնական աղբյուրն է, վալյուտային ռեզերվ, որն առանձնապես անհրաժեշտ է կապիտալիստական աշխարհի և ՍՍՀՄ-ի միջև հարաբերությունների սրվելու, ինչպես նաև անբերրիության հնարավորության կապակցությամբ»[21]։

Առաջին հնգամյակում արտաքին առևտրի կառուցվածքը, արժեքային հարաբերությամբ, կարելի է ներկայացնել հետևյալ կերպ (հաշված է իրացված գներով, միլիոն ռուբլիներով)[22]։

1927/28[23]	1928/29	1930	1931	1932	Ընդամենը հինգ տարում
Ներմուծում 34,6	25,2	27,4	27,4	24,8	139,4
Արտահանում 105,6	126,7	126,0	132,4	129,0	619,7
Ապրանքաշրջ. 140,2	151,9	153,4	159,8	153,8	759,1
Բալանս 71,0	101,5	98,6	105,0	104,2	480,3

Առաջին հնգամյակի երկրամասի արտաքին առևտրական գործարքների տվյալներից երևում է, որ զգալի չափով զարգացել է ապրանքաշրջանառությունը։ Այն նախորդ հինգ տարիների 600,3 միլիոն ռուբլու դիմաց տվյալ շրջանում հասել է 759,1 միլիոն ռուբլու, կամ աճել է 21 տոկոսով։ Հնգամյակի ամբողջ հաշվեկշռում արտահանման արժեքը գերազանցում է ներմուծմանը գրեթե չորս և կես անգամ, իսկ առանձին տարիներում՝ տատանվում է երեքից հինգի միջև։

Առաջին հնգամյակում երկրամասի արտահանման արժեքի զարգացումը բացատրվում է նախ՝ սովետական արտաքին առևտրի մոնոպոլիայի սկզբունքների պլանաչափ կիրառումով, որը ենթադրում է արտաքին առևտրական գործարքներում էքսպորտի մշտական վերելք՝ իմպորտի նկատմամբ, նպատակ ունենալով սիստեմատիկաբար ավելացնել էքսպորտային առևտրից ստացվող եկամուտները որպես սոցիալիստական կուտակման օժանդակ աղբյուր, մյուս կողմից, երկրի տնտեսական անկախությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ էր աստիճանաբար

20 *Տե՛ս* Вес торгово-промышленные Закавказья, статистический сборник, стр. 183, изд. 1927 г., Тбилиси.

21 «ՍՄԿԿ համագումարների, կոնֆերենցիաների և պլենումների բանաձևերում և որոշումներում», *հատ. 2, Հայպետհրատ, 1955, էջ 577։*

22 *Կազմված է Վրաստանի պետական արխիվի ֆ. 735, գ. 908, թ. 374 և 1982 գործի 2 թղթի տվյալների համաձայն։*

23 *1927 թ. վերջին ամիսների տվյալները մտցված են առաջին հնգամյակի արդյունքների մեջ, քանի որ վիճակագրական տվյալներում բերված են ղույգ թվերով։*

կրճատել իմպորտի ծավալը և միայն ներմուծել այն սարքավորումները, որոնք դեռ չէին արտադրվում սովետական արդյունաբերության կողմից։

Երկրորդ. առաջին հնգամյակում բոլոր հոդվածների գծով կրկնապատկվեց երկրամասի արտահանած ապրանքների (նավթի, մարգանեցի, ծխախոտի, գորգերի, փայտանյութերի) տեսակարար կշիռը, որի հետևանքով մի քանի անգամ ավելացավ նրանց իրացումից ստացված արժեքը։

Երրորդ. առաջին հնգամյակի երկրորդ կեսին երկրամասի էքսպորտային ապրանքների շարքը համալրվեց նոր հոդվածներով՝ պտուղներ, դեղարույսեր, մորթափառ, անասունի եղջերու, մուշտակի մորթի, ձուկ, տուֆ, պեմզա, մարմար, գրանիտ, ինֆազորային հող, տեխնիկական գլիցերին, գրնի, կոնյակ, բամբակի գործվածք, սղոցված փայտ և շատ այլ արտահանման առարկաներ։

Առաջին հնգամյակում կայուն հիմքերի վրա դրվեց առևտրական ակտիվ բալանսը, որը նախորդ հինգ տարիների 150,3 միլիոն ռուբլուց հասավ 480,3 միլիոն ռուբլու. այդ նշանակում է արտահանված ապրանքների արժեքով ծածկվեց ամբողջ ներմուծման գինը և 480,3 միլիոն ռուբլի մուտք գործեց երկրամասի վալյուտային ռեզերվների ֆոնդում։

Նշված հնգամյակի առաջին երկու տարում երկրամասի էքսպորտային ապրանքների շուկայական դրությունը նպաստավոր էր գրեթե բոլոր հոդվածների համար, իսկ 1930 թ. սկսած իրացման պայմանների մեջ առաջացավ փոփոխություն, որը կապված էր համաշխարհային տնտեսական ճգնաժամի (1929—1933 թթ.) բռնկման հետ։ Ճգնաժամի հետևանքով ընկավ կապիտալիստական ձեռնարկությունների արտադրության մակարդակը, որի պատճառով արտաքին շուկաներում կրճատվեց երկրամասի նավթամթերքների և մարգանեցի պահանջարկը, իսկ դա ազդեց նրանց իրացման գների վրա։ Անդրկովկասի էքսպորտային ապրանքներ սպառող երկրներում արտադրությունը կրճատվեց հետևյալ չափով՝ ԱՄՆ-ում 46,2 տոկոսով[24], Անգլիայում՝ 16,2, Ֆրանսիայում՝ 30,9, Գերմանիայում՝ 40 տոկոսով. համաշխարհային առևտրի շրջանառությունը կրճատվեց մինչև 1/3-ով։ Հակառակ դրան, սոցիալիզմի միակ երկրի էկոնոմիկան ապրում էր բուռն վերելք։ Սովետական ժողովուրդը վստահ իրականացնում էր առաջին հնգամյակի խնդիրները՝ ստեղծելով նոր հասարակարգի նյութա-տեխնիկական բազան։ Այս հանգամանքը ցույց տվեց արտադրության միջոցների հանրային սեփականության առավելությունը՝ կապիտալիստական մասնավոր սեփականության նկատմամբ, որը զերծ է կապիտալիզմին հատուկ տնտեսական ճգնաժամերից և դրա հետ կապված արտադրության անարխիայից և կոնկուրենցիայից։

Առաջին հնգամյակի խնդիրների կատարման շնորհիվ ՍՍՀՄ-ը մեքենաներ ներմուծող երկրից դարձավ մեքենաներ արտադրող երկիր։ Անդրֆեդերացիայում ավարտվեցին խոշոր արդյունաբերական ճյուղերի՝ Բաքվի նավթային արդյունաբերության տեխնիկական վերակառուցումը, Հայաստանի պղնձի հանքերի, Վրաստանի մարգանեցի արդյունաբերության վերակառուցումը։

Կուսակցության Կենտկոմի 1933 թ. հունվարին հրավիրված պլենումը հետևյալ կերպ բնութագրեց սոցիալիզմի առաջին հնգամյակի արդյունքները. «Քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերը ջախջախված են, սոցիալիստական էկոնոմիկայի հիմքը կառուցված է, սոցիալիզմի հաղթանակը ՍՍՀՄ-ում ապահովված է...»[25], ՍՍՀՄ-ը ագրարային երկրից վերածվեց ինդուստրիալ երկրի, դա ամրապնդեց երկրի տնտեսական անկախությունը, քանի որ ՍՍՀՄ-ը հնարավորություն ստացավ անհրաժեշտ սարքավորումների վճռական մասը արտադրել իր սեփական ձեռնարկություններում։

Սոցիալիզմի երկրորդ հնգամյակում երկրամասի արտաքին առևտրի առաջ դրված էին հետևյալ խնդիրները.

1. Տնտեսության բոլոր ճյուղերը լրիվ և վերջնականապես աղատել օտարերկրյա կախումից։

2. Արտաքին առևտրական հարաբերությունները կապիտալիստական աշխարհի հետ օգտագործել մեքենաների, սարքավորումների և հումքի ներմուծման համար, այն դեպքում, երբ անհրաժեշտ են սոցիալիստական շինարարության տեմպերի արագացման համար։

---

24 Տե՛ս История международных отношений и внешней политики СССР (1870—1957), Москва, 1957, стр. 195.

25 Տե՛ս «ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերենցիաների և պլենումների բանաձևերում և որոշումներում», հատոր 2-րդ, էջ 227։ Երկրամասի առևտրական հարաբերությունները քննարկելու ենք մինչև 1936 թ. ներառյալ, քանի որ հնգամյակի նախավերջին տարում ֆեդերացիան վերացվեց։

3. Ընդլայնել էքսպորտային ռեսուրսները այն ապրանքների հաշվին, որոնք արտաքին շուկաներում ունեն մեծ պահանջարկ։

Երկրորդ հնգամյակում երկրամասի արտաքին առևտրական գործարքները պլանավորելիս հաշվի էր առնված կապիտալիստական աշխարհի տնտեսական և քաղաքական ընդհանուր դրությունը, համաշխարհային տնտեսական ճգնաժամի խորացման ու ընդարձակման խնդիրները և նրանցից բխող հետևանքները՝ արտադրության կրճատումը, ապրանքների գնողունակության, արտաքին առևտրի շրջանառության ու գների անկումը և այլն։

Արևմուտքի կապիտալիստական երկրները (1929—1933 թթ.) համաշխարհային տնտեսական ճգնաժամի և դրան հաջորդող դեպրեսիայի շրջանում հովանավորական քաղաքականության միջոցով սահմանափակում էին ներմուծման ծավալը, իսկ սովետական էքսպորտային ապրանքների նկատմամբ վարում էին հատուկ վարչական հովանավորական քաղաքականություն, ձգտում էին արտաքին շուկաներում ամեն կերպ խոչընդոտներ ստեղծել նրանց՝ իրացման համար։ Չնայած դրան, օբյեկտիվորեն ստեղծվում էին նպաստավոր պայմաններ Սովետական Միություն ներմուծվող ապրանքների գների իջեցման համար, որովհետև կապիտալիստական երկրներում ճգնաժամի հետևանքով ընկան տեխնիկական սարքավորումների գները, որը ստիպեց կապիտալիստներին դրանք վաճառել իջեցրած գներով՝ տնտեսական լճացումից դուրս գալու համար։

Երկրամասի էքսպորտը աչքի էր ընկնում արտահանած ապրանքների բազմազանությամբ, արտահանվող ապրանքների ցուցակում մտցվեցին 38 նոր հոդվածներ[26], մարգանեցի հանքաքարին զուգընթաց սկսվեց արտահանվել ֆերոմարգանեց, լվացած և շեղջաքարային հանքատեսակներ, որոնց իրացման պայմանները կրկնակի անգամ նպաստավոր էին։ Սկսեցին արտահանվել քիմիական և շինարարական նյութեր՝ ասկանիտի հանքախառնուրդ, լեռնամոմ, օքսիդիանփայլար, բարիտ, դիատոմիտ, արդյունաբերական ապրանքներից՝ մեքենաշինության արտադրանք, գործվածքներ, մետաքսյա հագուստեղեն, փայտյա շինվածքներ, արհեստագործական կոոպերացիայի արտադրած ապրանքներ, մրգեղենի պահածոներ, հանքային ջրեր և այլ ապրանքներ։

Երկրամասի երկրորդ հնգամյակի չորս տարվա արտաքին առևտրական գործարքների կառուցվածքը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ (արտահայտված միլիոն ռուբլիներով, իրացված գներով)[27]։

	1933	1934	1935	1936	Ընդամենը չորս տարում
Ներմուծում	27,6	29,1	31,7	34,2	122,6
Արտահանում	167,0	186,8	212,8	248,7	815,3
Ապրանքաշրջ.	194,6	215,9	244,5	282,9	937,9
Բալանս	139,4	157,7	181,1	214,5	692,7

Տվյալներից երևում է, որ ապրանքաշրջանառությունը, համեմատած նախորդ հնգամյակ հետ, ավելացել է 21,2 տոկոսով կամ առաջին հնգամյակի 759,1 միլիոն ռուբլու դիմաց քննարկ վող շրջանում կազմում է 937,9 միլիոն ռուբլի, իսկ էքսպորտի արժեքը ավելացել է 24 տոկոս կամ 619,7 միլիոն ռուբլու դիմաց վերջին չորս տարում կազմում է 815,3 միլիոն ռուբլի, է պորտի արժեքի մեջ նկատվում է զգալի կրճատում՝ նախորդ հնգամյակի 139,4 միլիոն ռուբ դիմաց վերջին չորս տարում այն իջել է 122,6 միլիոն ռուբլու, կամ պակասել է 13 տոկոս

Տվյալ հնգամյակում երկրամասի իմպորտի կրճատվելը բացատրվում է հետևյալ հիմնա պատճառներով։ Նախ՝ երկրորդ հնգամյակում ներմուծված ապրանքների ցուցակից հանվ նավթարդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքը, ինչպես նաև ավտոտրանսպ սարքավորումները, քանի որ նշված ապրանքների սովետական արտադրությունն արդեն բ բարում էր ներքին սպառման պահանջները։ Երկրորդ առանձին արդյունաբերական ճյ համար անհրաժեշտ սարքավորումների (գլանվածք, մետաղալարեր, բարձր որակի պող ձուլվածքներ, սև և գունավոր մետաղներ) իմպորտը զգալիորեն կրճատվեց, որովհետև մեր արդյունաբերությունն արդեն սկսել էր երկրին տալ նշված արտադրանքը։ Երրորդ՝ իմպորտի

26 Տե՛ս Վրաստանի պետական արխիվ, ֆ. 735, գ. 1982, թ. 19։

27 Աղյուսակը կազմված է Վրաստանի պետական արխիվի ֆ. 735-ի 1737 գործի 77 1982 գործի 9 թղթի և 1868 գործի 76 թղթի տվյալների համաձայն։

սելը բխում էր երկրի տնտեսական անկախության ամրապնդման անհրաժեշտությունից։ Սեփական արդյունաբերական սարքավորումների արտադրություն ստեղծելու միջոցով պետք էր աղատվել կապիտալիստական երկրների տնտեսական կախվածությունից։

Առևտրական ակտիվ բալանսի սալդոն աճեց 30,7 տոկոսով, կամ նախորդ հնգամյակի 480,3 միլիոն ռուբլու դիմաց երկրորդ հնգամյակում կազմեց 692,7 միլիոն ռուբլի։

Նշանակում է՝ չորս տարվա էքսպորտային ապրանքների իրացումից ստացված վալյուտային միջոցներով ծածկվեց ամբողջ ներմուծման արժեքը և 692,7 միլիոն ռուբլի, որպես առևտրական բալանսի սալդո, մուտք գործեց երկրի վալյուտային ռեզերվների ֆոնդ։

Անդրֆեդերացիայի վերջին չորս տարվա արտաքին առևտրական գործարքներում, ինչպես նախորդ տարիներում, նավթամթերքի արտահանումը վճռական դեր է կատարել արտասահմանյան վալյուտա ձեռք բերելու գործում, որը բացատրվում է արտաքին շուկաներում նավթամթերքի նկատմամբ եղած պահանջարկի մշտական բարձրացումով, երկրորդ հնգամյակի էքսպորտի արժեքից 581,4 միլիոն ռուբլի[28] միայն մուտք է գործել նավթամթերքների իրացումից, որը կազմում է ամբողջ արտահանման արժեքի 71,3 տոկոսը։ Նավթամթերքի էքսպորտի զգալի աճը բացատրվում է այն հանգամանքով, որ 1933 թ. առաջին կեսին համաշխարհային տնտեսական ճգնաժամից դուրս գալու նշաններ երևացին Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի էկոնոմիկայում, որոնք հանդիսանում էին Անդրկովկասի նավթամթերքների հիմնական սպառողներ։ Բարձրացավ այդ երկրների պահանջարկը նավթամթերքների նկատմամբ և դրան զուգընթաց բարձրացան իրացման գները։ Այսպես, օրինակ, այդ արտադրանքի փթի միջին գինը հասավ 1 ռուբլի 40 կոպեկի, գրեթե կրկնապատկվեց 1913 թ. գների համեմատությամբ, որ կազմում էր 87 կոպեկ[29]։

Երկրամասի մնացած արտահանման միջոցների արժեքը ընդհանուր էքսպորտի հաշվեկշռում կազմում էր 233,9 միլիոն ռուբլի, որից մարգանեցին բաժին էր ընկնում 69,5 միլիոն ռուբլի[30] կամ ամբողջ էքսպորտի 8,5 տոկոսը, իսկ էքսպորտի մնացած ճյուղերին՝ 164,4 միլիոն ռուբլի, կամ 20,2 տոկոսը։

Անդրֆեդերացիայի գոյության ընթացքում երկրամասից արտահանվեց և արտաքին շուկաներում իրացվեց 1.810,3 միլիոն ռուբլու ապրանքներ, որից 487 միլիոն տրամադրվեց ներմուծվող ապրանքների արժեքին։ Ներմուծված ապրանքներից 406,2 միլիոն ռուբլի հատկացվեց երկրամասի ժողովրդական տնտեսության զարգացման նպատակների համար տեխնիկական սարքավորումների և արդյունաբերական հումքի ներմուծմանը, որը կազմում էր ամբողջ իմպորտի 83 տոկոսը, իսկ իմպորտի մնացած մասի՝ 80,8 միլիոն ռուբլու հաշվին ներմուծվեց լայն սպառման առարկաներ, որոնց պահանջարկը համեմատաբար շատ բարձր էր վերականգնման շրջանում։ Էքսպորտային վալյուտայի մնացած մասը՝ 1.323,3 միլիոն ռուբլի մուտք գործեց երկրամասի վալյուտային ռեզերվների ֆոնդ, որպես սոցիալիստական կուտակման օժանդակ աղբյուր։

Ինչպիսի անհրաժեշտությամբ որ ստեղծվեց Անդրֆեդերացիան, կապված նրա կազմակերպման սոցիալ-տնտեսական պայմանների հետ, նույնպիսի անհրաժեշտությամբ հնարավոր դարձավ նրա վերացումը, որը բխում էր ֆեդերացիայի հանրապետությունների զարգացման տվյալ էտապի մակարդակից, քանի որ սոցիալիզմն արդեն հաղթանակել էր այդ ժողովուրդների կյանքի գրեթե բոլոր ասպարեզներում։

Անդրֆեդերացիայի վերացումից հետո անցել է ավելի քան 31 տարի։ Կոմունիստական կուսակցության հոգատարության շնորհիվ ներկա էտապում Անդրկովկասյան եղբայրական հանրապետությունների միջև գոյություն ունի տնտեսական սերտ համագործակցություն, որը հնարավորություն է տալիս նրանց համատեղ լուծելու մի շարք կարևոր տնտեսական հարցեր, որոնք բխում են երկրամասի էկոնոմիկայի կենսական կարիքներից։ Ներկա շրջանում եղբայրական հանրապետությունները համատեղ օգտագործում են նավթի, պղնձի և մարգանեցի արդյունաբերական ճյուղերի արտադրանքը՝ իրենց արտադրողական ուժերի զարգացման համար։

Անդրկովկասի հանրապետություններում ստեղծված է միասնական գազամուղ՝ Ղարադաղի պղի հանքերի բպայի վրա, գրեթե ավարտված է Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միասնական էներգասիստեմի ստեղծումը, որը լայն հնարավորություններ է բաց անում էներգետիկ ռեսուրսները համագործակցված կերպով օգտագործելու համար։

---

28 Տե՛ս Վրաստանի պետական արխիվ, ֆ. 735, գ. 1982, թ. 9։

29 Տե՛ս Статистический экономический сборник Закавказья, изд. 11, стр. 71.

30 Տե՛ս Վրաստանի պետական արխիվ, ֆ. 735, գ. 1982, թ. 9։

Անդրկովկասի հանրապետությունների շրջանակներում իրականացված է արդյունաբերական կարևոր ճյուղերի՝ էլեկտրատեխնիկական, սարքաշինական, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների, դազգահաշինական, ինչպես նաև բամբակեղենի, բրդեղենի, մետաքսեղենի և տնտեսական այլ բնագավառների մասնագիտացումն ու կոոպերացումը։

Երկրամասի հանրապետությունների միջև կատարվող հասարակական աշխատանքի բաժանումից ելնելով, զարգանում են նրանց ձեռնարկությունների արտաքին տնտեսական կապերը արտասահմանյան երկրների հետ։ ՍՍՀՄ արտաքին առևտրական կապերին նրանց մասնակցությունը պայմանավորված է աշխատանքի համամիութենական բաժանման մեջ նրանց արդյունաբերական առաջավոր ճյուղերի զարգացման մակարդակով և գրաված տեղով։

Անդրկովկասյան հանրապետությունների ժամանակակից ձեռնարկությունները զինված են առաջավոր տեխնիկայով և բարձր մակարդակի վրա կանգնած գիտա-տեխնիկական մասնագետներով, որոնց բաց թողած արտադրանքը բարձր պահանջարկ է ունենում գրեթե բոլոր մայր ցամաքներում։ Ներկայումս Ադրբեջանից արտահանվում է 280 անուն ապրանք, որոնք սպառվում են ավելի քան 56 երկրներում, Հայաստանից՝ 130 անուն ապրանք, 69 երկրում, իսկ Վրաստանից՝ 160 անուն ապրանք, 66 երկրում[31]։

Եթե Ֆեդերացիայի շրջանում Անդրկովկասը հանդիսանում էր տեխնիկական սարքավորումների մշտական ներմուծող և պայքարում էր կապիտալիստական տնտեսության կախվածությունից ազատվելու համար, ապա նէրկա էտապում երկրամասի հանրապետությունները, շնորհիվ իրենց տեխնիկական զարգացման բարձր մակարդակի, դարձել են արդյունաբերական բոլոր տեսակի սարքավորումների արտահանողներ, որոնց արտադրանքը ճանաչում է գտել երկրագնդի գրեթե բոլոր շրջաններում։

---

31 Տե՛ս «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», էջ 15, 1967 թ., № 1։